

## ԿԱՐԾԻՔ

### ԼԻԼԻԹ ԿԱՄՈՅԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

XII-XVII ԴԱՐԵՐՈՒՄ» Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Կամոյի Մելիքյանի՝ «Հայկական թեմը և Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է՝ Ներածությունից, Երեք գլուխներից, Եզրակացությունից, Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, Հավելվածից, ընդհանուր՝ 152 էջ:

Թեմաներն ու խնդիրները, որոնց անդրադարձել է ատենախոսը, կարևոր և արդիական են, ուստի մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել ինչպես հայագիտությամբ, այնպես էլ վրացագիտությամբ զբաղվողների համար: Տեղեկությունների բազմազանությունն օգտակար է թե՛ հոգևոր-մշակութային, թե՛ սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական ու առօրյականության թեմաների ուսումնասիրման տեսանկյունից:

Ատենախոսն աշխատանքի Ներածություն բաժնում ներկայացնում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը, օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը: Ընդհանուր առմամբ՝ աշխատանքն աչքի է ընկնում հեղինակի ինքնուրույն կատարած ուսումնասիրությամբ, քննությամբ, վերլուծությամբ: Առավել արժեքավոր է ատենախոսության աղբյուրագիտական բազան, օգտագործված են բազմաթիվ սկզբնաղբյուրներ, ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն: Իսկ Հավելված բաժնում տրված են այդ սկզբնաղբյուրների բնագրերի լուսանկարները, ինչը նույնպես կարևոր է ուսումնասիրության ու թարգմանություն կատարելու համար: Հավելվածում ատենախոսը ներկայացրել է իր իսկ կազմած տոհմաճառերը:

Ատենախոսության հաջողված կողմերից է վիրահայոց թեմի եպիսկոպոսների ցանկի ճշգրտումն ու հավելումների բաժինը:

Դրական կողմերով հանդերձ, աշխատանքն ունի նաև որոշ մասեր, որոնք կարիք ունեն փոփոխման կամ վերանայման: Առկա են նաև խնդրահարույց ձևակերպումներ, անգամ վերնագրեր: Այդ տեսանկյունից հատկապես խնդրահարույց է թեմայի վերնագիրը, ինչպես նաև դրանից բխող գլուխների վերնագրերն ու ենթավերնագրերը: Ատենախոսությունում նկատելի է նաև ավելորդ, երբեմն թեմային չառնչվող նյութի առկայությունը, ինչպես նաև դրանց խառն ու չհամակարգված ներկայացնելը: Տպավորությունն այնպիսին է, կարծես ատենախոսը հավաքագրել ու մեկ թեմայի մեջ է ընդգրկել ուսումնասիրության ընթացքում իրեն պատահած հրապարակում առկա բազում տեղեկություններ, որոնք, սակայն, մշակված կամ մանրազնին քննության ենթարկված չեն: Ուստի ցանկանում ենք ատենախոսի ուշադրությունը հրավիրել հետևյալ խնդիրների, դիտարկումների ու որոշ անճշտությունների վրա, որոնք նկատվել են մեր կողմից, և որոնց անդրադարձը, կարծում ենք, օգտակար կլինի աշխատանքի հետագա բարելավման և հրապարակման համար:

1. Առաջնային խնդիրը, որին ցանկանում ենք անդրադառնալ, թեմայի վերնագիրն է՝ **«Հայկական թեմը և Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում»**: Նախ անհասկանալի է ինչու է XII-XVII դդ. ժամանակաշրջանի վերաբերյալ նշված **Վրաստան** ձևը, քանի որ այդ ժամանակաշրջանում այդպիսի պետություն չկար: Հայտնի է, որ այդ անվամբ ներկայիս պետության տարածքը, որը վրացերեն Սաքարթվելոն է, համապատասխանում է միջնադարյան տարբեր ժամանակների մի քանի թագավորությունների տարածքներին: Այդ թագավորություններից առաջինը XI դ. սկզբին Բագրատունիների գլխավորությամբ միավորված Վրացական թագավորությունն էր, որն իր հզորության գագաթնակետին հասավ Դավիթ Շինարար (1089-1125 թթ.) արքայի օրոք: Իսկ հետագայում Թամար թագուհուց (1184-1213 թթ.) հետո սկսեց թուլանալ և XIII դ. մասնատվեց երեք հիմնական թագավորությունների՝ Քարթլիի, Կախեթի և Իմերեթիի: Դրանցից առավել ազդեցիկները Քարթլին ու Կախեթն էին, որոնք էլ XVIII դ. կեսերից միավորվել են և ստեղծել Քարթլի-Կախեթի թագավորությունը,

բայց 1801 թ., միանալով Յարական Ռուսաստանին, դադարել գոյություն ունենալուց: Հետևաբար, ատենախության վերնագրում նշել XII-XVII դդ. Վրաստան, կարծում ենք ճիշտ չէ: Սակայն աշխատանքի վերնագիրը ունի ևս մեկ խնդրահարույց կողմ: Խոսքը **Հայոց եկեղեցու կարգավիճակ-ը** ձևակերպմանն է վերաբերում: Արդյո՞ք ճիշտ չէր լինի, եթե նշվեր **հայկական թեմի կարգավիճակը**, քանի որ եթե նշվում է **«Հայկական թեմը»**, ապա ինչո՞ւ է անդրադառնում **Հայոց եկեղեցու կարգավիճակին**: Ի վերջո Հայոց եկեղեցին ինչպե՞ս կարող էր որևէ կարգավիճակ ունենալ այլ պետության կազմում, հասկանալի չէ: Բացի այդ, ատենախոսության ամբողջ նյութը վերաբերում է ներկայիս Վրաստանի արևելյան, առավել հստակ՝ հարավարևելյան տարածքում՝ միջնադարյան Քարթլի-Կախեթի թագավորության կազմում գտնվող հայկական համայնքներին, եկեղեցիներին ու թեմին: Ուստի առավել ընդունելի կլիիներ թեման վերնագրել օրինակ՝ **«Հայկական թեմերի ձևավորումն ու կարգավիճակը Արևելյան Վրացական թագավորություններում XII-XVIII դդ.»** և ներածությունում մանրամասն բացատրվեր, որ աշխարհագրական ընդգրկմամբ այն ներառում է հիմնականում արևելյան հատվածներն ու Հայաստանի հյուսիսային տարածքները, ինչը բավարար չափով ներկայացված չէ (էջ 5-ում, նաև բացատրված չէ, ինչու է նշվում միայն Քարթլի-Կախեթի տարածքը), ինչն էլ խնդիրներ է առաջացնում: Քանի որ նշված է **«Հայկական թեմը և Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում»**, ապա ենթադրվում է, որ խոսքը նաև արևմտյան տարածքների մասին է, այնինչ արևմտյան և հյուսիսային վրացական տարածքների վերաբերյալ որևէ անդրադարձ չկա:

Նույն պատճառով անհրաժեշտություն է առաջանում վերանայել թեմայի գլուխների վերնագրերն ու ենթավերնագրերը: Հատկապես առաջին գլխի վերնագիրը՝ **«XII-XIII դարերում Վրաստանում Հայոց եկեղեցու կարգավիճակը և հայկական թեմի ձևավորումը»**, կարծում ենք, պետք է լինի նախ թեմի ձևավորումը, ապա կարգավիճակը, այն էլ դարձյալ թեմի կարգավիճակը, ոչ թե Հայոց եկեղեցու: (Նկատառումը վերաբերում է նաև Սեղմագրին):

## 2. Ներածություն

Էջ 3-ում նշված է. «Այս ժամանակաշրջանում հայությունը ներհոսք կադարեց նաև դեպի հարևան երկիր՝ Վրաստան, որտեղ հայկական համայնքի ձևավորման ու կայացման գործընթացը պայմանավորվում է տեղի հայկական թեմի ծանրակշիռ մասնակցությամբ»: Այսինքն ստացվում է հայկական թեմն առավել վաղ է գոյություն ունեցել «Վրաստանում», քան հայության ներհոսքը եղել է, իսկ այդ դեպքում ե՞րբ է թեմը ձևավորվել:

Էջ 3-ում նշված է. «XII դարասկզբին՝ Հյուսիսային Հայաստան հոգևոր կենտրոններ Սանահինն ու Հաղբատը, Հյուսիսային Հայաստանը Քարթլի պետական կազմավորման մեջ ընգրկվելուց հետո,...» և հղում է տված՝ «Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները՝ Տաշիրը, Լոռին, Աշոցքը, Տավուշը, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդգրկվել են Քարթլի երկրամասի մեջ» (հղում 1): Այսինքն շեշտվում է Հյուսիսային Հայաստան, բայց հղման մեջ նշվում է Հյուսիսարևելյան Հայաստան ու թվարկվում տարածքները: Պետք է միօրինակ տալ, հակառակ դեպքում նշելով Հյուսիսային Հայաստան, կարելի է հասկանալ ամբողջ հյուսիսային հատվածքները:

Բացի այդ, նշվում է «Քարթլի պետական կազմավորման մեջ ընգրկվելուց հետո» և այլն: Հարց է ծագում՝ ի՞նչ ասել է Քարթլի պետական կազմավորում. սա թագավորություն էր: Իսկ եթե ենթակա էր Վրաց թագավորությանը, հարկավոր էր այդպես էլ նշել:

Էջ 3-ում նշված է. «պայմանավորված Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր կացությամբ, նկատվում է հայ արհեստավորների, առևտրականների, ազնվական ընտանիքների հոսք դեպի վրաց արքունի խոշոր քաղաքներ՝ Տփղիս, Գորի, Բազարի և այլն:» Վերը նշված Հայաստանի հյուսիսարևելյան վայրերից են տեղափոխվել այդ քաղաքներ, թե՞ Հայաստանի ամբողջ տարածքից, մանրամասնելու կարիք կա:

Էջ 4-ում նշված է. «մերօրյա Վրաստանի» այս դեպքում առավել կարևոր է նշել XII-XVII դդ. «Վրաստանը» ո՞րն էր:

Էջ 4-ում նշված է. «XII-XVII դդ. Վրաստանում հայկական թեմի պատմությունը», ոչ թե XII-XVII դդ. Վրաստանում, այլ գոնե պետք է լինի՝ «Վրաստանի հայկական թեմի պատմությունը XII-XVII դդ.»:

Էջ 6-ում նշված է. «1783 թ. Քարթլի-Կախեթի թագավորությունը Գեորգիևսկի համաձայնագրի ստորագրումով ընկնում է Ռուսաստանի անմիջական վերահսկողության ներքո»: Քարթլի-Կախեթի թագավորությունը ո՞րն է, մինչ այդ հիշատակում չկար այդ թագավորության մասին: Անհրաժեշտ է անդրադառնալ այդ թագավորության ստեղծման ժամանակին, թեկուզ և տողատակում հղման ձևով, որպեսզի հարց չծագի, ե՞րբ էր ստեղծվել, որ այդ թվականին էլ ընկավ Ռուսաստանի ազդեցության տակ:

Էջ 6-ում նշված է. «Աշխատանքի աշխարհագրական ընդգրկումը սահմանափակվում է հիմնականում Վրաստանի պետական կազմավորումներ՝ երկրամասեր Քարթլիով և Կախեթով, առանձին դեպքերում՝ Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններով՝ Տաշիր, Լոռի, Աշոցք, Տավուշ, որոնք ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդգրկվել են Քարթլի երկրամասի մեջ: Ընդ որում՝ Քարթլի երկրամասի հայ բնակչությանը կարելի է բաժանել երկու մասի՝ դեպի վրացական տարածքներ հաստատված և Քարթլի կազմավորման մեջ ընդգրկված՝ Հյուսիսային Հայաստանի բնիկ հայ բնակչություն»: Թեև սույն պարբերությունում բացատրվում է աշխատանքի տարածքային ընդգրկումը, այնուհանդերձ մինչ այդ և հետագայում էլ նշվում է «Վրաստան» ձևը: Բացի այդ չի բացատրվում, թե ինչո՞ւ է ընդգրկում հենց Քարթլի-Կախեթի տարածքը, և ի վերջո Քարթլի-Կախեթը մե՞կ տրված է որպես երկրամաս, մե՞կ էլ՝ թագավորություն: Այդ դեպքում առավել հստակեցնել:

Բացի այդ, հայկական տարածքներն արդյոք XII-XVII դդ. ընթացքում են ընդգրկվել Քարթլի-Կախեթի երկրամասի կամ թագավորության կազմում, ի՞նչ վարչական, քաղաքական կամ իրավական ձևակերպում ունեին այդ տարածքները, համարվո՞ւմ էին Վրաց թագավորության մաս, թե՞ ոչ, առանձին թագավորություն էին: Ի վերջո, ե՞րբ և ինչպե՞ս են ընդգրկվել Քարթլի կազմավորման մեջ: Այդ խնդիրներին հարկավոր է հստակ բացատրություն:

### 3. Հիմնավորում պահանջող

Էջ 19-ում նշված է. «**«Սանահնի Քյոթուկ»-ում պահպանված մի տեղեկությունից հայտնի է, որ Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է Արաս թագավորի (928-953) իշխանության օրոք: Պետք է նկատել նաև, որ ճարտարապետական առումով այս եկեղեցին բավականին համեստ է և հատկապես չափերով չորս անգամ փոքր Սբ. Ամենափրկիչ եկեղեցուց: Ըստ այդմ՝ թյուր կլինի նրա կառուցումը վերագրել Աշոտ III Ողորմածին և Խոսրովանույշ թագուհուն՝ չնայած հրովարտական ամբողջ վանքի կառուցումը վերագրվում է նրանց»:** Արդյո՞ք արդարացված է՝ միայն փոքր չափերի համար կարծել, որ եկեղեցու կառուցումը սխալմամբ է վերագրված Աշոտ III Ողորմածին ու նրա կնոջը:

Էջ 19-ում ինչո՞ւ է կարևորվել այն հարցը, թե **Սմբատ II արքան եպիսկոպոսական աթոռը Սբ. Աստվածածնից տեղափոխել է Սբ. Ամենափրկիչ**, դրանով ի՞նչ խնդիր էր լուծվում, չէ՞ որ երկուսն էլ Սանահնի վանական համալիրի մեջ էին:

Էջ 16-23-ը ընդգրկում է ատենախոսության առաջին գլխի առաջին ենթավերնագիրը, որը վերնագրված է՝ **«Վրաստանի հայկական թեմի նախապատմությունը»:** Անհասկանալի է, ինչո՞ւ է նման վերնագիր ընտրված, եթե դրանում քննվում է միայն Սանահնի թեմի ընդարձակումը Սմբատ II արքայի կողմից, ինչպես նաև «Սանահնի Քյոթուկ»-ի հիշատակագրությունը: Որևէ բացատրություն չկա, թե ինչո՞վ էր այդ քննությունը վերաբերում Վրաստանի հայկական թեմի վիճակի նախապատմությանը: Կարծում ենք, ելնելով բովանդակությունից, գուցե նշվեր **«Սանահնի թեմի նախապատմություն»** և այլն:

Էջ 23-ում նշվում է. **«Հայերի հոսքը դեպի Վրաստան պարբերական բնույթ է կրել XII-XIII դարերի ընթացքում: Այն ունեցել է իր նախադրյալները՝ պետականության կորուստը, առևտրական ճանապարհների հյուսիս տեղափոխվելը, վրաց թագավորների բարենպաստ քաղաքականությունը»:** Դատելով «Վրաստան» անվանումից՝ հարց է ծագում, ատենախոսը դարձյալ նկատի ունի Քարթլի-Կախեթի տարածքը, թե՞ ներկայիս Վրաստանի տարածք:

Էջ 23-ում նշված է. **«Նկատենք, որ միացյալ վրաց թագավորության փոփոխությանը զարկ տալու, երկիրն արտաքին թշնամիներից պաշտպանելու, ինչպես նաև՝ ներսում թագավորի և վրացի անջատողական ազնվականության միջև շարունակվող պայքարի պայմաններում վրաստանի արքաները հանձին հայերի՝ տեսնում էին թագավորական իշխանության համար վստահելի հենարան:»** Ի՞նչ հիմքեր կան կարծելու, որ հանձին հայերի վրաց արքունիքում տեսնում էին վստահելի հենարանի: Հարկավոր է որևէ օրինակով մատնանշել այդ վստահությունը:

Էջ 24-ում նշված է. **«վրացական միջավայրում գործել են հայ անվանի շինարարներ, որոնք այսպեղ, հավանաբար, հրավիրված են եղել»:** Ինչո՞ւ է ատենախոսը նման կարծիք հայտնում, հարկավոր է հիմնավորել:

Էջ 24-ում նաև նշված է. **«Չնայած Դ. Բակրաձեն հիմնվել է բանավոր տեղեկության վրա, սակայն, ամենայն հավանականությամբ, հենց Մցխեթի հայ բնակչությունն է վերաբնակեցվել նոր մայրաքաղաքում՝ Տփղիսում»:** Հիմնավորում է պահանջում ատենախոսի ենթադրությունը:

Էջ 24-ում նշված է. **«Ենթադրելի է՝ հայ-վրացական դավանական միասնության շրջանում Տփղիսում եղել է փոքրաթիվ հայկական համայնք: Ուխտանես պատմիչը հիշատակում է Կիրակոս Տփղիսեցի քահանայի մասին. «Նա մեծաւ աշխատութեամբ գրեալ և թարգմանեալ ի մերս լեզու՝ եր մեր գրով. վասն զի ինքն իսկ կարի քաջ գիտէր զգիր և զլեզու վրաց»:** Բայց պատմիչի տեղեկությունից չի հասկացվում, թե Կիրակոս Տփղիսեցին հենց Տփղիսի եկեղեցում է կատարել թարգմանություն և այլն: Ուստի այդ հիմքով դժվար է ենթադրել, որ Տփղիսում առկա էր փոքրաթիվ հայ համայնք: Բացի այդ, նշված է **«հավանաբար, կարող է վկայել»**, իսկ ինչո՞ւ հավանաբար:

Էջ 25-ում ևս մեկ անհասկանալի մեջբերում է առկա, գուցե անհաջող խմբագրման հետևանքով է կամ սխալ մեկնաբանության պատճառով է:

---

<sup>1</sup> Ուխտանես, Հայոց պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վ. Առաքելանի, Երեւան, 2006, էջ 34:

Էջ 26-ում նշված է Հայոց Սմբատ արքայի անունը, բայց հարկավոր է բացատրել, թե որ Սմբատի մասին է խոսքը, քանի որ X դ. երկու Սմբատ արքաներ են եղել՝ I և II:

Էջ 28-ում նշված է Կարին քաղաքի ավերման մասին, հարկավոր է բացատրել և նշել ժամանակը, երբ է ավերվել, քանի որ, ատենախոսը նշում է քաղաքի ավերումից հետո Ումեկյան տոհմից Ումեկը տեղափոխվեց Տփղիս:

Էջ 33-ում անդրադառնալով Գեորգի III-ի գահակալման (1156-1184 թթ.) ժամանակաշրջանին՝ ատենախոսը նշում է, որ եպիսկոպոս «Բարսեղը Հաղբատի առաջնորդական վիճակը վերականգնելու համար դիմում է վրաց թագավորին, այլ ոչ թե՝ Կիլիկիայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսին: Կարելի է կարծել՝ Հայոց եկեղեցու դիրքերի թուլացմամբ էր պայմանավորված եպիսկոպոսի դիմումը թագավորին»: Ի՞նչ է նշանակում Հայոց եկեղեցու դիրքերի թուլացմամբ էր պայմանավորված: Հարկավոր է մանրամասնել դիրքերի թուլացումը ինչո՞վ էր պայմանավորված, կամ արդյոք թուլացած էր, թե՞ ոչ, ի վերջո, իսկ մյուս թեմերը նման դեպքում, ո՞ւմ էին դիմում:

Էջ 53-ում նշված է. «հայ ավատատիրական դասի ներկայացուցիչների մի մասն էլ պատրասարվել է Վրաստանում: Այդպիսի ընտանիքներից մեկն էր Սյունյաց Օրբելյանների Բուրթեյան ճյուղը, ում ձեռքում էր կենտրոնացած Սյունյաց նահանգի գավառների հոգևոր և աշխարհիկ իշխանությունը»: Ի՞նչ ասել է պատրասարվում էին Վրաստանում, ի՞նչ կարգավիճակ էին նրանք ստանում, իսկ իրենց կալվածքներն ի՞նչ էին լինում: Հարկավոր է առավել մանրամասն անդրադառնալ:

Էջ 56-ում նշված է մեջբերումը «...գամուսինն իւր զԱյմելիքն, և զորդին իւրեանց Աշայն... Քմիկս, որ...» հարկավոր է վերանայել, քանի որ բնագրի անհաջող կրճատման հետևանքով մեջբերված տեքստը չի համապատասխանում բնագրին, բացի այդ բացատրությունն է անհամապատասխան ու անհասկանալի: Օրինակ՝ «Աշայը»-ը պետք է լինի «զԱրղունշայն» և այլն: Ձեռագիրն էլ «Մաշտոց» է, այլ ոչ թե՝ «Ավետարան»:

Բացի այդ, ցանկալի կլիներ, որ ատենախոսը փորձեր ստուգաբանել «Վարդիսուպան» գյուղի անունը: Գուցե հենց տեղում հաստատված հայերի կողմից է հիմնվել գյուղը, այդ պատճառով էլ այդ անունն է ստացել, քանի որ Վարդին նույն

հայերեն **վարդն** է, իսկ «սոփելի, սոփլի» (სოფელი, სოფლი) վրացերեն նշանակում է գյուղ:

Էջ 73-ում ատենախոսը կարևոր դիտարկում է կատարում Բեթլեհեմի եկեղեցու վերաբերյալ և անդրադառնում **Պ. Իոսելիանիի պնդմանը**, բայց հղում տրված չէ և հայտնի չէ ինչ աշխատությունից է պնդումը: Հարկավոր է առավել մանրամասն նշել և պնդումը և հղում տալ:

Էջ 85-ում ատենախոսը մեջբերում է կատարել Ժան Շարդենից. «**Վրաստանում հայերը քանակապես գերազանցում են վրացիներին ու անհամեմատ ավելի հարուստ են**», սակայն հստակ չէ, գուցե անդրադարձ կատարվեր, թե Ժան Շարդենը «Վրաստան» նշելիս ո՞ր տարածքները նկատի ուներ:

Էջ 88-ում ամբողջական մեջբերմամբ տրված է ՄՄ Մատենադարանում պահվող վրաց Ռոստոմ թագավորի 1633 թ. արձակած հրամանը և հղումում նշված է ատենախոսն է թարգմանել վրացերենից: Այն որ բովանդակությունը շատ կարևոր է, անխոս, սակայն հասկանալի չէ, ինչո՞ւ է թարգմանության սկիզբը տրված միջին հայերենով, ապա կեսից նշված աշխարհաբար, գրական հայերենով: Ի դեպ, բնագրի լուսանկարը տրված է էջ 146-ում, որտեղ տեքստն ամբողջովին վրացերեն է, ապա ինչո՞ւ է այդպես թարգմանված: Հավելենք, որ եթե տրված է քրոնիկոնի տարեթիվ, ցանկալի է նշել քրոնիկոնով, ապա տալ ներկայիս թվականով, քանի որ նշված է **քրոնիկոնի 1633 թ.**, պետք է լինի **քրոնիկոնի 321 թ.**, փակագծում՝ 1633 թ.: (Համաձայն եմ)

Էջ 98-ում նշված է «**Մոքալաք**», նախ հարկավոր է բացատրել, ո՞րն է մոքալաքը: Հ. Աճառյանի բառարանում նշած է «Մոքալաք»-Թբիլիսիի քաղաքային բնակիչ, պատվավոր, տոհմական քաղաքացի հին Վրաստանում: Ատենախոսը նույն էջում գրում է «**Պետական մոքալաքները**», այսինքն՝ դա ո՞րն է:

Էջ 100-ում նշված են այն աղբյուրները և մեջբերված են այն տեղեկությունները, որոնցում վկայված է Թումանը (տոհմի հիմնադիրը): Աղբյուրներում Թումանը նշված է **պարոն**, իսկ ատենախոսը նրան կոչում է **պարոնտեր** ձևով: Ցանկալի կլիներ, որ ատենախոսը, բացատրեր, թե ինչ է նշանակում տվյալ ժամանակաշրջանում «պարոնտեր» տիտղոսը, քանի որ դա ունի իր հիմնավոր բացատրությունը: Այդ մասին շատ օգտակար

կարող է լինել Վահե Թորոսյանի հոդվածը (տե՛ս Թորոսյան Վ., «Պարոնսերություն» ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV դդ.), Լրագրեր հասարակական գիտությունների, Երևան, 2011, թիվ 1-2, էջ 30-42):

Էջ 102-ում նշված է. «**Եվ այսպես, 1661 թ. ձեռագրի հիշատակարանում Թումանյանների տոհմի ներկայացուցիչները՝ Նասրը, Բայանդուրը, Զուրապը և այլոք, վրաց իրավունքի հուշարձանում հիշատակվում են Թումանիշվիլի ազգանվամբ**» և հղում է տրված՝ 486-ում յարտադրված Սամարտլոս մեջլեքի, Երևան, 1978, էջ 27: Բայց եթե վերը մեջբերված հղումից է, ապա այնտեղ Թումանիշվիլի չէր նշված (տե՛ս էջ 101-102, հղում 481) իսկ եթե հղված մեջբերման մեջ այդպես էր նշված եղել, ապա հարկավոր էր մեջբերումը տալ ամբողջական, իսկ եթե այլուր է այդպես նշված, ապա տալ նաև այդ մյուս մեջբերումն ու հղումը:

Էջ 103-ում նշված է. «**Թաղայի գերդաստանի ներկայացուցիչն էր՝ նրա որդին: Պատմիչները նշում են նաև Բայանդուրի և Շիռչի էթնո-դավանական պատկանելությունը, համապատասխանաբար՝ հայ և վրացի**»: Նախ հարկավոր է բացատրել ով էր այս Թաղան, նաև հավելել տոհմաձառում, առավել հստակ երևալու և ամբողջական լինելու համար, բացի այդ, հարկավոր է հիմնավորել էթնո-դավանական պատկանելությունը, այսինքն՝ Բայանդուրը հայ էր, իսկ Շիռչը՝ վրացի՞:

Էջ 103-ում նշված է. «**Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում պահվող Հ-404 ձեռագիրը, որը վերաբերում է Թումանիշվիլիների ընտանիքի հայկական ծագմանը: Այն երկլեզու է, սակայն հիմնական մասը գրված է վրացերենով և պարունակում է նաև պատարագի հայերեն տեքստեր վրացերեն տառադարձությամբ (Մխեդրուլի)**»: Այսինքն՝ երկլեզու էր՝ վրացերեն, հայերեն և նաև հայերեն տեքստի վրացերեն տառադարձությամբ, հստակեցնել:

Էջ 104-105-ում նշված են երկու Բայանդուր Թումանիշվիլիների մասին՝ 1642 թ. և 1650 թ.: Սակայն որևէ հիմնավորում չկա, որից կարելի է եզրակացնել, որ նրանք տարբեր մարդիկ են, գուցե նույն անձնավորության մասին է խոսքը: Ատենախոսը չի անդրադարձել այդ խնդրին, միայն տվել է նրանց հայրանունները, որը, կարծում ենք, բավարար հիմք չէ

նրանց տարբեր ներկայացնելու համար: Հարկավոր էր առավել հիմնավոր քննության ենթարկել:

Էջ 108-ում էլ նշված է «1640-ական թվականներից Ավետիս եպիսկոպոսի հետ միաժամանակ Հաղբատի առաջնորդ է հիշատակվում Թումանի որդի Բարսեղը, ով պաշտոնավարել է նաև 1677 թվականից», իսկ սա այդ նույն Բարսեղներից մեկն է, թե ոչ, քանի որ նրա մասին միայն նշված է նրա դամբանագիրը առկա է Հաղբատի վանքում: Կարելի էր համեմատել, քննել:

Բացի այդ, գուցե հենց այստեղից սկսվեր Թումանյանների/Թումանիշվիլիների տոհմին անդրադարձը, որպեսզի առավել հասկանալի լիներ, թե ինչ կապ ունեն նրանք ատենախոսության թեմայի հետ:

Էջ 113-114-ում Խոջա Բեհբուդի ու Ասլան Մելիքի նույնացման մասին նշելիս ատենախոսն անդրադառնում է Պ. Մուրադյանի ու Խորեն քահանա Խուցյանի կողմից նրանց նույնացմանը, սակայն չի մանրամասնում նրանք ինչո՞ւ են նույնացվել այդ հեղինակների կողմից, և ինչո՞ւ է ատենախոսն Ասլանին նույնացնում Խոջա Բեհբուդի որդիներից Ասլանի հետ:

#### 4. Անհաջող ձևակերպումներ

Էջ 16-ում նշված է. «Հայտնի է, որ Դավիթ IV Շինարարի (1089-1125) գահակալության ժամանակ Վրաստանը, վերջնականապես միավորվելով, դարձավ Անդրկովկասի ամենահզոր պետությունը»: Որքանով հայտնի է, Դավիթ Շինարարի օրոք ոչ թե վերջնական միավորվեց, այլ մինչ այդ միավորված թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին, իսկ նրանից, ու հատկապես Թամար թագուհուց հետո թուլացավ ու մասնատվեց:

Էջ 16-ում նշված է. «Հերևաբար, չենք կարող մեկ անգամ էլ քննության նյութ չդարձնել Վրաստանում հայկական թեմի սկզբնավորման տեսանկյունից բացառիկ սկզբնաղբյուրներից մեկը, որի ուսումնասիրությունը կարող է հնարավորություն ընձեռել գոնե մասամբ պատրասխան տալ առաջաբանում նշված հիմնահարցերին»: Թե որ սկզբնաղբյուրի մասին է խոսքը, պետք էր հղում տրվեր, նոր հաջորդիվ մեջբերվեր:

Էջ 23-ում նշված է. «Եթե Հայաստանի առաջին բաժանումից հետո (387թ.)<sup>2</sup> Բյուզանդական կայսրությունում հայկական գաղթօջախն արդեն ձևավորման փուլում էր, ապա նույնը չի առնչվում Վրաստանին»: Նախ հարկավոր էր նշել՝ ո՞ւմ միջև էր բաժանվել Հայաստանը, քանի որ հաջորդիվ, եթե նշված է Բյուզանդական կայսրությունում ..., ապա փաստենք, որ բաժանվել էր Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի միջև: Բացի այդ հղում է տված Հայոց պատմություն, հտ. II, գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 155: Սակայն նշենք, որ սույն հատորի երկրորդ գրքում նշված չէ Հայաստանի առաջին (387 թ.) բաժանման մասին:

Էջ 39-ում նշված է. «Վրաստանում Հայոց եկեղեցին մեծ դերակատարում է ունեցել ոչ միայն հայերի հոգևոր կյանքում, այլև՝ տնտեսական, քաղաքական, մշակութային գործընթացներում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում այն խոշոր ավատատեր էր:», «Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ երկրում *հայոց դավանանքի* ու նրա հետևորդների կարգավիճակի վերաբերյալ պատկերացումները միշտ չէ», կարծում ենք ճիշտ է նշել *Հայոց եկեղեցին*, այլ պետք է նշել՝ *թեմը*, նաև Հայոց դավապանք չէ, այլ *Հայ Առաքելական եկեղեցու դավանանք*:

Էջ 40-ում նշված է. ««Քարթլիս Ցխովրեբայի» հայկական տարբերակում», թե՛ հայերեն թարգմանությունում:

Էջ 49-ում նշված է. «Խոսելով Քարթլի-Կախեթում հայերի հաստատման նախադրյալների մասին՝ պետք է նախ և առաջ նկատի ունենալ Արևելյան Վրաստանի և նրա քաղաքների քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակն ու նշանակությունը *նվաճողների համար*», ո՞ւմ են ուղղված այս նվաճողներ բառը, հայերի՞ն, թե՞ քոչվոր նվաճողներին:

Էջ 57-ում հստակեցնել «Ավետարանների» պատվիրատուներին, քանի որ երկու տարբեր ձեռագիր հիշատակարանների մասին է խոսվում, ու չի հասկացվում «այդ Ավետարանի պատվիրատուն», ատենախոսը որին նկատի ունի:

<sup>2</sup> Հայոց պատմություն, հտ. II, գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 155:

էջ 103-ում նշված է «չխորանալով» բառը, առավել տեղին է նշել «չմանրամասնելով»:

էջ 114-ում մանրամասնված է Իոանն Բագրատիոնին, այնինչ նրա մասին վերևում արդեն իսկ նշված էր էջ 101-ում, մանրամասնելը տալ վերևում:

## 5. Տոհմաձառերի մասին

Հարկավոր է առավել հստակ ներկայացնել տոհմաձառերը, ճյուղերը, քանի որ չի հասկացվում ով ում որդին ու եղբայրն է, քույրն է, թե կինը, վերանայել:

## 6. Տեխնիկական վրիպակներ

էջ 3-ում նշված է. «բարեդրացիական», պետք է լինի՝ «բարիդրացիական»

էջ 14-ում նշված է «Բ. Առաքելյանի<sup>3</sup>», բայց հղումը տրված է Բ. Հարությունյանի աշխատությունը:

էջ 14-ում հղված է «Մ. Մալխասյանի աշխատությունը՝ *«Ժողովրդական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում 17-րդ դարի առաջին կեսին, Երևան, 2020»*, բայց պետք է լինի՝ *Ժողովրդագրական գործընթացները*:

էջ 14-ում նշված է. «Գ. Գվրիտիշվիլիի «Աղբյուրներ Վրաստանի պատմությունից (XV-XVII դդ.)»<sup>4</sup>, պետք է լինեն Դ. Գվրիտիշվիլի, և «Դրվագներ Վրաստանի պատմությունից (XV-XVII դդ.)»:

էջ 14-ի հղում 71-ում, էջ 58-ի հղում 275 և այլուր Месхия Ш. А., Города и городской строй феодальный Грузии XVII-XVIII вв., Тбилиси, 1959, պետք է լինի феодальной Грузии:

էջ 24-ում նշված է Դ. Բաքրաձեի անունը, մեկ Բաքրաձե, մեկ՝ Բակրաձե,<sup>5</sup> բերել միօրինակության:

էջ 24-25-ում նշված է «մի ձեռագիր «Շարակնոցի» մասին, որը 1073 թ. արտագրվել էր Տփղիսում», և մեջբերված է տեքստը ու հղված Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 108, սակայն այդ էջում նշված է «Ավետարան», այլ բովանդակությամբ, միայն տողատակում նշված է ատենախոսի մեջբերման առաջին

<sup>3</sup> Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001:

<sup>4</sup> გვრიტიშვილი დ., ნარკვევები საქართველოს ისტორიიდან: (XV-XVII სს.), თბილისი, ტომი II, 1965.

նախադասությունը: Անհասկանալի է ատենախոսության այդ տեղեկության ու դրա քննության իմաստը, մեջբերման ոչ ճիշտ հղումը, ուստի առավել մանրամասն հիմնավորման ու բացատրության կարիք ունի:

Էջ 26-ում հարկավոր է նշել Արխագաց թագավոր Կոստանդինի կառավարման թվականները:

Էջ 29-ի հղում 138-ը և 139-ը նույնությամբ կրկնվում են, հարկավոր է նշել նույն տեղում:

Էջ 33-ում նշել, ով էր Հերակլ II-ը: Առհասարակ հարկավոր է արքայի անունը նշելիս նշել, նաև թե որտեղի արքան էր:

Էջ 33-ում նշել նաև Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի աթոռակալման տարիները:

Էջ 37, 96 և 122-ում նշված է քաղքեղոնական, պետք է լինի քաղկեդոնական:

Էջ 45-ում նշված է Ուոհայեցին, պետք է նշել Մատթեոս Ուոհայեցին, պատմիչների անունները պետք է տալ ամբողջական:

Էջ 57-ում միօրինակ տալ Ջահանշահ, թե՛ Ջհանշահ:

Էջ 60-ում գրված է Գ. Մայսուրաձեն, պետք է լինի՝ Գ. Մայիսուրաձե:

Էջ 61-ում հղում 296-ը նշված է **Ջորդանիա Թ.** (Ջորճանոս օ.), պետք է լինի **Ժորդանիա Թ.** (Ջորճանոս օ.), բացի այդ, գրված է նշված աշխատություն, հատոր II, բայց գրականության ցանկում Ժորդանիա կամ Ջորդանիա Թ. հեղինակ նշված չէ, անհասկանալի է խոսքը, որ աշխատության մասին է:

Էջ 102-ում նշված է Վ. Բատոնիշվիլի տեղեկությունները, բայց հղում է տրված Պ. Իոսելյանիին հղում 485:

Էջ 103-ում նշված է **Բայանդուր**, թե **Բյանդուր**, միօրինակության բերել:

Էջ 114-ում հում 552 և 553-ը նույնությամբ կրկնվում են, տալ «Նույն տեղում» ձևով:

Ելնելով վերոնշյալ դիտարկումներից, որոնք թեև որոշակիորեն սուվերում են աշխատանքի գիտական արժեքը, այնուամենայնիվ, ինչպես նաև նկատված դրական կողմերից, հատկապես ատենախոսության գերազանցապես ինքնուրույն շարադրանքից ու վերլուծությունից, կարծում ենք՝ Լիլիթ Կամոյի Մելիքյանի «**Հայկական թեմը և Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում**» վերնագրով

ատենախոսությունը համապատասխանում է է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությանն ու բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  պ.գ.թ. Լիանա Նազարյան

11.12.2023թ

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ. Լիանա Նազարյանի ստորագրությունը հաստատում եմ

«ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ



Հ. Ղ. Մուրադյան

11.12.2023թ